| | | |
|---|---|---|
| Կարապետ Մէլիք Զօհրապեանց Գուրիժեցի . . . . . . . . . . | 1 | 5 |
| Խաչատուր Տէր Զաքարեանց Գ.առ-բաղացի 'ի Գուրէժ բնակեալ . | 3 | |
| Սարգիս Մէլիք-Գաղստարեան Գ.առ-բաղացի 'ի Գուրէժ բնակեալ . | 1 | |
| Դաւիթ Եփրեմով Շուշեցի . . | — | 5 |
| Սողոմոն Բէժով Տփխիսեցի . . | 5 | |
| Եգոր Զօհրապեանց Տփխիսեցի | 1 | |
| Ստեփան Ներսիսեանց Գ.առ-բաղացի 'ի Գուրէժ բնակեալ . . . . | 1 | |
| Խաչիկ Գալստեանց Գ.առ-բաղացի 'ի Գուրէժ բնակեալ . . . . . | 3 | |
| Ռափայէլ և Գաբրիէլ Յովսէփ-խանեան Գուրիժեցի . . . . . | 10 | |
| Զաքարիա Սիմոնեան Գուրիժեցի | 1 | |
| Մահտեսի Կարապետ Յովսէփեան Գուրիժեցի . . . . . . . . . | — | 5 |
| Մահտեսի Աստուածատուր Ենոքեան Գուրիժեցի . . . . . . . . | 1 | |
| Մկրտիչ Մովսիսեան Յեկրաստանցի 'ի Գուրէժ բնակեալ . . . . . | 1 | 5 |
| Նազէլ Պօղոսեան Տէր Նազէլեանց Գուրիժեցի . . . . . . | 1 | |
| Սրապիոն Ենոքեան Գուրիժեցի | — | 5 |
| Յակոբ Մահտեսի Սիմէոնեանց Գուրիժեցի . . . . . . . . . | — | 7 |
| Ընդամէն | 215 | 2 |

Այս բոլոր գումարն առնէ մէկ հարիւր տասն մանէթ թղթադրամ ռուսաց:

Գրիգոր Արքեպիսկոպոս Յովսէփեանց:

ի 10-ն Մարտի 1869 ամի

Ի ԳՈՒՐԷԺ:

---

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆՆ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԳ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ԳԷՈՐԳԱՅ ՉՈՐՐՈՐԴԻ

Ի Փոխանորդէ Թեմակալին Երեւանայ

խոնարհաբար Յայտարարութիւն

Ըստ սեպուհ պարտականութեանս իմ՝ համաձայն սովորութեան ընդ ամենայն ամ-ղեա՝ 'ի սկզբան արձակուրդի կրկին սեփ Էջմիածնայ Թեմական և Ծխական Դպրոցաց Երևանայ, յաւարտ ձեռն 'ի գործ արկանելոյ հայցափորձութեան, նախ Ծխական Դպրոցաց ապա 'ի 14-էն ամսոյս Հայ օրիորդաց Սուրբ Գայիանեան Դպրոցի աշակերտաց, և ապա 'ի 15-էն նոյնոյ ամսոյ ցայս թիւ՝ միւս արական սեփ Էջմիածնայ Դպրոցի քաղաքիս՝ հարկաւոր դատեցայ առաջի առնել Ձերում Վեհափառութեան ըստ հետևելոյս 'ի տեղեկութիւն:

Ըստ կարգի աւուրց հասանելոյ իւրաքանչիւր միում, հայցափորձեալ զեկեղեցական Դպրոցաց զաշակերտն քաղաքիս կանոնաւոր կերպիւ, նախ Քանաքեռ գիւղի, ապա Նորագ մասին քաղաքիս, ապա Սուրբ Յովհաննու Եկեղեցւոյ, ապա Զօրաւոր Եկեղեցւոյ, հուսկ ապա Ս. Պետրոս և Պօղոս Եկեղեցւոյ՝ գտայ արդարև զայս յառաջադիմութեան 'ի սկզբունս առարկայից Հայոց լեզուի և Ռուսաց, արդիւնաւորեալք յաշխատութեանց նոցին Հոգաբարձուաց և Վարժապետաց, որք ըստ չափու կարողութեանց իւրեանց յիրաւի ջանան օր քան զօր արդարութ առնել զընթացս կրթութեան աշակերտաց յիշեալ դպրոցաց:

Աշակերտուհի Օրիորդք, որք ամենեքեան ուսանին 'ի մի և նոյն դասատան, 'ի հայցափորձութեան ոչ միայն 'ի կրօնական առարկայն կարի յոյժ փայլեցան հանդիպացան ընդ հայց և ընդ պատասխան 'ի սկզբանց հարկաւոր տեղեկութեանց կրօնագիտութեան՝ համաձայն կանոնաց Հայաստանեայցս ուղղափառ սուրբ Եկեղեցւոյ. յաշխարհագրական տեղեկութեանց՝ լաւագոյնս. յառնեգործութեան արհեստի գեղեցկիկս. բայց 'ի լեզուագիտութիւնս Հայոց և Ռուսաց եւս և 'ի թուաբանութեան՝ միջակ. յորոյս ամենայն առարկայն երևեալ 'ի շարունակելոյ ասողի ներկայս՝ յուսամ հետ զհետէ յառաջ նկատել մեզ Հայ աշակերտու-

հեաց 'ի գաւառապետութիւնս մեր հարկաւորեալ յաղագս բարեկիրթ որդւոց մայրութեանց իւրեանց՝ զարգացեալք յուղղափառութեան կրօնս ըստ սրբոյ Լուսաւորչին մերոյ Գրիգորի՝ յերեւելոց 'ի ջանից և հըրկալութեանց Հոգաբարձուհեաց և Ուսուցչաց նոցին, որք այս անգամ 'ի խուռն հանդիսի հարցաքննութեան բոլորաշուրթն շնորհակալութեամբ օրհնեցին զուրբ կեանս հառաչակաց Ծնօղէդ, յիշեալ և յուսացեալ յամենաքաղցր անձնուիրութիւն Զերդ Վեհափառութեան՝ յայտարար հանգիտանալով առ ամենախնամ մեծի Հօրդ՝ թէ զերախտական բանս 'ի Կոնդակի Հայրապետական օրհնութեան, և թէ զգլխաւոր օժանդակութիւնս յարգեանց Թեմական մեծ դպրոցի քաղաքիս:

Աշակերտք Թեմական դպրոցիս ըստ որում բաց 'ի պատրաստականէն բաժանին յերկուս՝ Առաջին և Երկրորդ դասատունս որպէս միջին կարգի ուսումնարան, արժան վարկայ ըստ ցուցման թերթի հարցաքննութեան նոցա յիւրաքանչիւր առարկային 'ի տեղեկութիւն Վեհափառութեան Ձերոյ պատկերացուցանել 'ի ներքոյ:

Իսկ յաշակերտաց պատրաստական դասարանի որոց թիւն հասանի ցվաթսուն և վեց, են ոմանք որք 'ի սկզբանց Հայ և Ռուս լեզուաց լուսաւորեալք են, ոմանք միջակ, և այլք տկարք ըստ երեւելոյ փորձութեան ընթերցանութեանց նոցա:

Վեհափառ Տէր, եթէ ընդարձակեսցին հետ զհետէ դրամական միջոցք այսորիկ դպրոցաց 'ի մերոյ Ազգակցաց յօժարակամ դրամաւոր օժանդակութեամբ, որպէս արդեն ստանի 'ի յոյս լուսաւոր դարուս սկզբնաւորեալ յառաջադիմութեան — լիապատոր շնորհիւ անքուն հսկօղի Վեհափառութեան Ձերոյ, հաւատամ է, թէ ունին 'ի սուղ ժամանակի ոչ սակաւ արդիւնս պտղաբերել Հայ որդիք կրկին սեր 'ի պայծառութիւն Սրբոյ Եկեղեցւոյ և 'ի լրութիւն ներկայ փառաց ազգի իւրեանց. որոյ ամենից բարեկարգութեանց և արդիւնաւոր յառաջադէմ զարգացմանց սակս՝ և ես ըստ խոնարհ կարողութեան 'ի Տէրական մեծ խնամս Ձերդ Վեհափառութեան յուսացեալ՝ փութամ տանել զվայելուչ ընթացս առաւել քան զոր ունին զարդս 'ի հարկէ սրբազան պաշտամանց իմոց,

Մնալով ամենախոնարհ հրամանակատար
Մեծի Հայրապետութեան Ձերոյ

Փոխանորդ Թեմին Երեւանայ

Մեսրովբ Վարդապետ Սմբատեանց:

Համ. 485.
Ի 20-ն Յունիսի 1869 ամի.
ՅԵՐԵՒԱՆ

---

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՐԱՐԱՏ ԱՄՍԱԳՐՈՅ

Վարարագու Կոնսիստորիայն Հայոց՝ վաղուց 'ի վեր մեծաքանակ դրամական կորուստ նշմարելով Նուխի քաղաքի երկուց Եկեղեցեաց մէջ՝ հին և նոր երեցփոխանաց մուտ և ելից հաշուակալութեանն, քանիցս անգամ սախպած էր Հոգեւոր Կառավարութիւնն Նուխւոյ՝ հետամուտ լինել, գտնել այս կորուստը: Հոգեւոր Կառավարութիւնը՝ առարկայի վսեմութեան նայելով, որոյ վրայ հարկաւոր էր երկար միջոցներ ծախել, նոյն Կոնսիստորիայի թոյլտուութեամբ՝ կարգեց անդ-այս փոխանորդ Հայր Արիստակէս վարդապետի նախագահութեամբ յերկոտասան անձանց յանձնաժողով, ութն յաշխարհականաց, Աղնիւ-Պետրէ Կամսարական, Յարութիւն-բէկ Մուրատեանց, Գրիգոր-բէկ Մելիք Ազամալեանց, Աղէքսանդր բէկ Մակեդոնսկիյ, Գաւիթ բէկ-Սարգսեանց, պարոն Աստուածատուր Շահրազեանց, պարոն Յակովբ Վարդապետեանց և պարոն Յակովբ Կարապետեան Առաքելեանց, և չոր-